«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - §Հայ հոգևորականության մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին¦: Թեմայի դասավանդման առանձնահատկությունը

ԱՌԱՐԿԱ	--Հայոց եկեղեցու պատմություն---
ՀԵՂԻՆԱԿ	------Ազնիվ Հակոբյան---------
ՄԱՐԶ	-------Արմավիր----------
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	------Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հ/դ----

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1 7
«ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻՆ»: 7
ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 23
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հայ ժողովրդի պատմության ոսկեմատյանում հավերժ գրանցված բազմաթիվ հերոսական էջերում իրենց բացառիկ տեղն ունեն Մայիսյան հերոսամարտերը, որոնք ձախողեցին հայերին վերջնականապես բնաջնջելու երիտթուրքական ծրագիրը:

1918 թ. Անդրկովկասում տեղի ունեցած իրադարձությունների արմատները պետք է փնտրել Հոկտեմբերյան հեղաշրջման մեջ: 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը, կարող ենք ասել, որ դարակազմիկ իրադարձություն ունեավ նաև Հայաստանի համար: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ընդունվում է հաշտության դեկրետը, որի արդյունքում ռուսական զորքերը դուրս են գալիս ազատագրված Արևմտյան Հայաստանից և ռազմաճակատը քայքայվում է: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ թուրքական զորքերն անարգել վերանվաճում են Արևմտյան Հայաստանը և պատրաստվում ներխուժելու Արևելյան Հայաստան: Գլխավոր նպատակը Մեծ Թուրանի պետության ստեղծումն էր և 1915 թ. իրեն կիսատ թողած <<սև գործը>> շարունակելը: Ծրագրված վերջնարդյունքը Բաքվի գրավումն ու այնտեղ խորհրդային իշխանությունը տապալելն էր լինելու:

Այս օրհասական պահին, գոյության համար պայքարի է դուրս գալիս հայ ժողովուրդը, որը, չնայած իր փոքրաթիվ ուժերին, կարողանում է հաղթանակ տանել թուրքական մեծաքանակ հրոսակների դեմ և պատմության մեջ մայիսը հավերժացնել որպես փառահեղ հաղթանակների ամիս: Հենց այդ հաղթանակներն էլ իրական նախադրյալներ են ստեղծում վերականգնելու երկար տարիներ կորսված հայկական անկախ պետականությունը:

Մայիսյան հաղթանակների և պետականության հաստատման գործում անմնացորդ ու անուրանալի դերակատարում է ունենում Հայոց եկեղեցին իր նվիրյալ միաբաններով: Պատմության մեջ պետականության 600-ամյա բացակայության պայմաններում, եկեղեցին իր վրա վերցնելով պետության գործառույթները, գործուն մասնակցություն է ունենում հայրենիքի պաշտպանության մեջ՝ մշակելով ազգի բարոյական առողջացման, հայրենասիրության դաստիարակության որոշակի համակարգ: Այդ օրերին, երբ թուրքական զորքն սպառնում էր

ամբողջ Արարատյան դաշտավայրը ոտնատակ տալով մտնել Երևան և ժողովրդի լինել-չլինելու հարցն էր դրված, մեր ժողովրդի բոլոր խավերը՝ այդ թվում նաև պետական-քաղաքական այրերն ու եկեղեցու սպասավորները, միակամ որոշում են՝ ամեն գնով պաշտպանելու հայրենի երկիրը:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ մեր հետազոտական թեմայի արդիականությունը, ինչպես նաև գործնական նշանակությունն ու կարևորությունը պայմանավորված է նրանով, որ մինչ օրս Թուրքիան չի հրաժարվել իր պանթուրքիզմի և պանօսմանիզիմի ծրագիրն իրականացնելուց, որի իրականացման ճանապարհին հսկայական պատնեշի նման կանգնած է հայ ժողովուրդը: 44 օրյա պատերազմը, տարածաշրջանում Թուրքիայի ունեցած դերակատարումը և ներկա քաղաքական իրավիճակները վկայությունն են այն փաստի, որ հայ ժողովուրդը պետք է միշտ հիշի պատմության հերոսական դրվագները, գիտակցի իր հայրենիքի անկախության գինը և ոգշնչվելով իր պատմության անմահ հերոսներով՝ միշտ պատրաստ լինի պահպանելու արյան գնով ժառանգություն ստացած իր մի բուռ հայրենիքը:

Թեմայի ընտրությունը կապված է 2021թ. Արցախյան 44 օրյա պատերազմի իրադարձություններով, հայերի պատմության այս ժամանակահատվածի հերոսական իրադարձությունների նկատմամբ ունեցած հետաքրքրությամբ՝ ցանկանալով մեկ անգամ ևս արժևորել եկեղեցի-պետություն համագործակցության արդյունքը՝ այն է հաղթական հայրենիք ստեղծելն ու պահպանելը: Ընդհանուր առմամբ Սարդարապատի հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեծագույն փայլատակումներից մեկն է, մի նոր ու հաղթական Ավարայր, որը հիմնովին կդրոշմվի պատմության մեջ և մշտապես սխրանքների կկոչի սերունդներին:

Հետազոտման նպատակն ու խնդիրները: Սույն հետազոտության ուսումնասիրումը ունի գիտական, քաղաքական, ճանաչողական, այժմեական նշանակություն: Մայիսյան հերոսամարտերին մասնակցած հոգևոր և քաղաքական գործիչների (միևնույն ժամանակ նրանց անձնական արխիվների) վերաբերյալ պահպանվել են զգալի քանակությամբ արխիվային փաստաթղթեր, մամուլի նյութեր, որոնք հնարավորություն են ընձեռում հայկական պատմագրության մեջ Մայիսյան հերոսամարտերի ամբողջական և գիտական ուսումնասիրություն կատարելու համար:

Մայիսյան հերոսամարտերի և հայ հոգևորականության մասին վկայող արխիվային գործերի ուսումնասիրությունը պահանջում է շրջահայաց և քննական վերաբերմունք, այլապես

անխուսափելի կդառնանան թյուրըմբռնումներն ու բացահայտ սխալ հետևությունները: Առաջնորդվելով այս գիտակցությամբ ճանաչողական ճշգրիտ վերլուծություն կկատարենք՝ ներկայացնելով ժամանակաշրջանի ընդհանուր քաղաքական, սոցիալական և տնտեսական իրավիճակը:

Թեմայի հետազոտման նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել Հայ Առաքելական եկեղեցու նշանակալի դերակատարումը Մայիսյան հերոսամարտերին, վերլուծել քաղաական իրավիճակը, Մայիսյան հերոսամարտերի պատճառներն ու հետևանքները: Թեմայի ուսումնասիրության ընթացքում անդրադառնալու ենք այն հարցին, թե ինչպես դասավանդենք <<Հայ հոգևորականության մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին>> թեման դպրոցներում, առաջարկենք մեթոդներ, որոնք առավել հետաքրքիր և արդյունավետ կդարձնեն դասաժամը: Մեր խնդիրներն են ուսումնասիրել դասագրքերը, պարզել դրանց դրական ու բացասական կողմերը, արդյունավետությունը, դասավանդման մեթոդները: Ցավոք սրտի պետք է նշենք, որ այսօրվա դպրոցական դասագրքեր ունեն որոշակի խնդիրներ ծավալի և բովանդակության առնչությամբ: Դասանյութի ծավալը շատ է և նյութը ներկայացված է աշակերտի համար ոչ այդքան հետաքրքիր կողմից, որի պատճառով էլ աշակերտները ձանձրանում են և հետաքրքրություն չեն ցուցաբերում պատմության նկատմամբ:

Նշված նպատակի իրագործման համար առաջադրվել և հետևողական լուծվել են ներքոշարադրայլ խնդիրներ՝

- քննարկման առարկա է դարձել հայ հոգևորականների մասնակցությունը մայիսյան հերոսամարտերին
- քննարկել հոգևոր և քաղաքական գործիչների ցուցաբերած դիրքորոշումը այդ դժվարագույն և բարդ իրավիճակում՝ արժևորելով նրանց կողմից կատարած ժամանակաշրջանի իրավիճակի ճիշտ գնահատումը:
- առաջադրել նոր մոտեցումներ <<Հայ հոգևորականության մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին>> թեմայի դասավանդման վերաբերյալ:

Մեթոդները: Առաջադրված հիմնախնդիրների լուծման և վարկածների հաստատման համար հետազոտությունը հիմնականում իրականացվել է պատմա-շարադրական մեթոդով, որն իրենից ներկայացնում է երևույթների և իրադարձությունների վերարտադրում, դրանց ընթացքի հետազոտում՝ իրենց բնորոշ բոլոր հատկանիշներով ու առանձնահատկություններով հանդերձ:

Մեթոդի հիմքում ընկած է պատմականության սկզբունքը: Արդիականացման մեթոդը նույնպես կիրառվել է, քանի որ սերտորեն կապված է համեմատական-համադրական մեթոդի հետ, համաձայն որի ուսումնասիրելով ժամանակակից պատմական գործընթացները կարելի է դատել հեռավոր անցյալի այս ճակատագրական մարտերի մասին՝ արժևորելով և ոգշնչվելով հայի սխրանքներով: Ցանկացած հետազոտություն կարելի է համարել լիարժեք և գիտական այն դեպքում, եթե դիտարկվում է նրա արդիականությունը պատմական, հասարակական յուրաքանչյուր ժամանակահատ վածում: Կիրառվել է նաև վերլուծության, համեմատության ընդհանրացման մեթոդները:

Հետազոտությունը հնարավորություն տվեց հասկանալ և խոսել պատմական տեքստերի կարևորության մասին: Պատմական տեքստերը հիմք են հանդիսանում ուսուցչի համար՝ դասավանդման նյութեր ընտրելիս և մեթոդներ մշակելիս: Տեքստերին առնչվելիս աշակերտներն ընդլայնում են իրենց աշխարհայացքը, տեղեկատվական ու մտավոր ունակությունները, որոնք նպաստում են ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս:

Հետազոտության առարկան և ժամանակագրական շրջանակը: Սույն հետազոտական աշխատանքի առարկան է հանդիսանում Մայիսյան հերոսամարտերը և հայ հոգևորականությունը:

Հետազոտության օբյեկտը հանրակրթական դպրոցում պատմության դասավանդման արդյունավետության բարձացման գործընթացն է:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն հետազոտական աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ փորձել ենք հրապարակի վրա եղած պատմագիտական գրականության, արխիվային փաստաթղթերի, ժողովածուների, ամսագրերի, մամուլի նյութերի հիման վրա ավելի ամբողջական, համապարփակ և նորովի կերպով ներկայացնել կենսական նշանակություն ունեցող ժամանակաշրջանը, լույս սփռել հայ հոգևորականների կատարած անձնուրաց գործունեության վրա և ամենակարևորը՝ հիմնահարցի դասավանդման առանձնահատկությունները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշատանքը բաղկացած է ներածությունից, 1 հիմնական գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

«ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻՆ»:

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ ու հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները: Պատմական կրթության բովանդակության արմատական փոփոխությանը զուգընթաց անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել ու բազմազան դարձնել պատմության դասավանդման տեխնոլոգիան, ուսուցման գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունքների ստուգման ձևերը, ձևավորել դասավանդման տեխնոլոգիական համակարգ: Պետք է դասավանդում ու ուսուցումը կազմակերպվի այնպիսի տեխնոլոգիաների միջոցով, որոնք հնարավորություն կընձեռնեն պատմական նյութը մատուցել համեմատությունների պատճառահետևանքային կապերի բացահայտման միջոցով: Պատմության դասավանդման գլխավոր նպատակն է սովորողների մեջ ազգային ինքնագիտակցության ձևավորումը, պատմական անցյալի հետ ծանոթացումը, անցյալի փորձի հիման վրա՝ ներկայի ճիշտ ուղու կառուցումը, ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների ճիշտ գնահատումը, զարգացած աշխարհայացք ունեցող անհատի դաստիրակումը, որը օժտված կլինի հայրենասիրությամբ, համամարդկային արժեքներով:

Դպրոցական դասընթացում դասի կազմակերպման արդյունավետությունը ճիշտ կազմակերպելու համար պետք է հաշվի առնել ուսումնասիրվող թեմայի՝ <<Մայիսյան հերոսամարտերը և Հայոց եկեղեցու դերակատարումը>>, առանձնահատկությունները: Թեման դասավանդվում է հանրակրթական հիմնական դպրոցի 8-րդ, իսկ ավագ դպրոցի 11-րդ դասարաններում անդրադարձ է կատարվում թեմային՝ ներկայացնելով առաջին հանրապետության սկզբնավորումը:

Քննարկվող ժամանակաշրջանը պայմանավորված է մի շարք առանձնահատկություններով, որոնք անմիջապես ազդեցություն են ունեցել հայ ժողովրդի պետականության ձեռք բերման վրա: Դրանք են՝

- 1917 թվականին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունները և դրանց արդյունքները:
- Ներկայացնել իրավիճակը Անդրկովկասում, Արևմտյան և Արևելյան Հայաստաններում:
- Նկարագրել Մայիսյան հերոսամարտերը:
- Պարզաբանել Երզնկայի զինադադարի, Տրապիզոնի և Բաթումի կոնֆերանսների էությունն ու արդյունքները հայերի համար:
- Վերլուծել գոյամարտերի հետևանքներն ու անհրաժեշտությունը:
- Մեկնաբանել հայ և ռուս գործիչների գործունեությունն ու դիրքորոշումները:
- Գնահատել հայ հոգևորականների մասնակցությունը և Մայիսյան գոյամարտերի արդյունքները: Գևորգ Ե Սուրենյանցի, Արամ Մանուկյանի, Թ. Նազարբեկյանի, Մ. Սիլիկյանի, Դրոյի, Դանիել Բեկ-Փիրումյանի գործունեությունները:

Ընհանուր գծերով ներկայացնելով թեմայի ընդհանուր առանձնա հատկությունները, նշենք, որ պատմության դասավանդման համակարգի կառուցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Հանրակարթական հիմնական դպրոի 8-րդ դասարաններում ուսուցանվող առարկաների հանդեպ աշակերտների վերաբերմունքը դառնում է ավելի գիտակցված, փոխկապակցվում է անհատի ունակությունների հետ: Պատմությունը ուսումնասիրելիս հայտնվում են սիրելի և ոչ սիրելի թեմաներ, հետաքրքրություն է առաջանում մարդկանց արարքների և դատողությունների հանդեպ: Փաստերը պահում են իրենց գրավչությունը: Սակայն պատմությունը դադարում է առաջնորդ տեղը գրավել նախընտրելի առարկաների շարքում: Աշակերտներն արդեն կարող են ինքնուրույն ընկալել ստացված տարբեր աղբյուրներից տեղեկություններ և վերարտադրել դրանք: Նրանք արդեն կարողանում են աշխատել տարբեր տեսակի սկզբնաղբյուրների հետ: Ուստի թեման՝ «Մայիսյան հերոսամարտերը և Հայ եկեղեցու դերակատարումը», ուսումնասիրելիս աշակերտները կկարողանան վերարտադրել պատմական պատկերները, իրադարձությունները, շարադրել փաստերը պատմական հերոսի անունից, ընդունել ոչ շատ բարդ որոշումներ, կապված առաջադրված պատմական իրավիճակի հետ, կարող են քննադատել սխալները՝ հիմնվելով անցյալի օրինակների վրա, գտնել տարբերություններ իրադարձությունների տեքստային նկարագրություններում: Աշակերտները կարող են ինքնուրույն հաստատել Մայիսյան հերոսամարտերի անհրաժեշտությունն ու

հետևանքները, ներկայացնեն կարևորագույն դեմքերին, հոգևորականության, Գևորգ Ե Սուրենյանցի դերակատարումը ճակատամարտերին, արժևորի եկեղեցի-պետություն համագործակցությունը: Սակայն նրանք կդժվարանան ինքնուրույն վերլուծել հասարակական-քաղաքական հայացքներն ու գաղափարները: Աշակերտները կարող են պլանավորել իրադարձությունները ուսումնասիրելու հետ կապված իրենց աշխատանքը, ինքնուրույն կարող են կատարել ճանաչողական առաջադրանքներ և զեկույցներ պատրաստել:

Մեր կողմից ուսումնասիրվող թեման հիմնական դպրոցում անցնում են «Մայիսյան փառահեղ հերոսամարտերը» դասաժամի ընթացքում, որն ուսումնասիրելու համար հատկացված է երկու դասաժամ: Առաջին դասաժամին ներկայացվում է պատերազմի վերաճումը թուրք-հայկականի, Արևմտյան Հայաստանի գրավումը, Անդրկովկասի անկախացումը, Բաթումի դաշնագիրը: Երկրորդ մասում ներկայված է Մայիսյան հերոսամարտերը, նշանավոր դեմքերից փոքրիկ ակնարկով նշվում է Դանիել Բեկ-Փիրումյանի, Արամ Մանուկյանի, Դրոյի, Գարեգին Նժդեհի, Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյանի, հոգևորականներից՝ Գևորգ Ե Սուրենյանցի, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի անունները, ներկայացված է ճակատամարտերի մասնակիցների թվեր, գործողություններ և հերոսամարտերի պատմական նշանակությունը: Դասագրքում առակա է նաև 1918թ. Մայիսյան հերոսամարտերի քարտեզը, մեջբերում կա Գևորգ Ե Սուրնեյանցի խիզախ քայլի՝ Էջմիածինը չլքելու վերաբերյալ, կան նաև հարցեր և առաջադրանքներ, քննարկման հարցեր, իսկ դրանից հետո արդեն նոր անուններ, հասկացություններ[1]:

Այլ է պատկեր 11-րդ դասարանում: Բնագիտական դասարանների աշակերտները մեծ մասամբ պատրաստ են յուրացնելու պատմության տեսական հարցերը, ինքնուրույն լուծելու պրոբլեմատիկ խնդիրները: Հումանիտար դասարաններին ավելի բնորոշ է հետաքրքրությունը դեպի փաստեր, դեպի պատմական տեղեկությունների ձեռք բերում: Այս տարիքի աշակերտներն արդեն կարող են տարբերել իրենց սեփական և այլոց գաղափարները կապված քննարկվող թեմայի շրջանակներում, ընկալել իրադարձությունների մեկնաբանման այլընտրանքային մոտեցումները, գնահատել դրանք, առաջ քաշել սեփական վարկածներն ու գնահատել իրավիճակը:

Հաշվի առնելով դասագրքերի ընդհանուր բովանդակությունը՝ պարզ է դառնում, որ անհրաժեշտություն է առաջանում ավելի մանրամասն ներկայացնել հայ գործիչների կատարած

[1] Հայոց պատմություն, 8-րդ դասարան, Մելքոնյան Ա., Սիմոնյան Ա., Նազարյան Ա., Մուրադյան Հ., Երևան, 2018, էջ 146-152:

քայլերն ու ձգտումները՝ չմոռանալով ռուս գործիչների դերակատարումը: Թեման ներկայացնել այնպես, որ քննարկման նյութն ավելի շատ լինի: Սովորողների առջև խնդիր դրվի, որ ինքնուրույն մշակեն և ներկայացնեն թե ինչու՞ հայկական զորքը միայնակ պատերազմեց թուրքական զորքի դեմ Կովկասյան ճակատում, ո՞րն էր հայ հոգևորականների դերակատարումը այս մարտերի ընթացքում: Սրանով մենք կկարողանանք սովորողների մոտ ձևավորել ինքնուրույն միտք ու ամենակարևորը, որ նրանք լիովին կկարողանան ներկայացնեն ճակատամարտի առաջացման պատճառները և ճանաչել նշանավոր հոգևոր գործիչներին ու երկրի պետականության մեջ արժևորեն եկեղեցու դերակատարումը:

Տվյալ թեման արդյունավետ դասավանդելու համար կարևոր է ուսուցչի **դասի պլանը:** Օրինակ՝

Դասարան- 8

Առարկա – Հայոց պատմություն

Թեմա – Մայիսյան հերոսամարտերը և Հայոց եկեղեցու դերակատարումը

Դասի անցկացումը – Պատմության և հասարակագիտության կաբինետ

Դասի տիպը- Դպրոցական դասախոսություն

Դասի նպատակը

• Սովորողներին ներկայացնել Արևելյան և Արևմտյան Հայաստանների դրությունը 20-րդ դարի սկզբին, Անդրկովկասի անկախությունը, Կովկասյան ռազմաճակատի քայքայումը և դրա հետևանքները, Արևմտյան Հայաստանի գրավման պատճառները, Արևելյան Հայաստանը թուրքական արհավիրքից պաշտպանելու համար հայ քաղաքական և հոգևոր գործիչների իրականացված քայլերը, Մայիսյան հաղթանակները և Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը:

• Նպաստել սովորողների պատմական մտածողության, աշխարհայացքի ընդլայմանը: Զարգացնել սովորողների պատմահամեմատական, վերլուծական հմտությունները:

• Նպաստել սովորողների ազգային ինքնագիտակցության ձևավորմանը և հայրենասիրական դաստիրակությանը, պատմությունից առավել խորքային գիտելիքների ձեռքբերմանը:

Մեթոդներ, հնարներ- Զրույց, (հարցուպատասխան), քարտեզ, փաստաթուղթ:

Նախորդ դասի հարցում և գնահատում չենք անցկացնում, քանի որ ամբողջ դասաժամը հատկացվում է դպրոցական դասախոսությանը։

Թեմայի հիմնական հարցեր

1.Բոլշևիկյան հեղաշրջումը, Հայաստանի ակնկալիքները, <<Թուրքահա յաստանի>> մասին դեկրետը

2.Քաղաքական դրությունը Անդրկովկասում, Արևմտյան Հայաստանի գրավումը։

3.Թուրք-անդրկովկասյան պատերազմի վերաճումը թուրք-հայկական պատերազմի։

4.Մայիսյան հերոսամարտերը, նշանավոր դեմքերն ու կազմակերպիչները

5. Հայոց եկեղեցու դերը և գործունեությունը

5. Հաղթականի պատճառներն ու հետևանքները

6.Հայաստանի Հանրապետության ձևավորումը։

Ներածական հարցեր

1.Ի՞նչ գիտեք Բոլշևիկյան հեղաշրջման մասին։

2.Ի՞նչ սպասելիքներ ուներ հայությունը Ռուսաստանում տեղի ունեած հեղշրջումից։

Նախնական տեղեկություններ- Բոլշևիկյան կուսակցությունը 1917թ. իրականացնում է պետական հեղաշրջում և Ռուսաստանում իր ձեռքն է վերցնում իշխանությունը։ Իշխանափոխության արդյունքում երկրամասում առաջանում է քաղաքական ճգնաժամ։ Առաջին անգամ ստեղծվում է բանվորա-գյուղացիական պետություն, որը վարում է բոլորովին նոր տիպի ներքին և արտաքին քաղաքականություն. ապահովում էր բոլոր աշխատավորների ազգատ ու բարեկեցիկ կյանքի կառուցումը։ Սովետական իշխանությունը ծնվում է լենինյան դեկրետներով խաղաղության և հողի մասին, որոնք արտահայտում էին ճնշված մարդկանց հույզերն ու բաղձանքները։ Հայ ժողովրդի մոտ առաջանում են հույսեր Թուրքահայաստանի ազատագրման և անկախության ձեռք բերման նկատմամբ։ 1917 թվականի դեկտեմբերին ժողովրդական կոմիսարների սովետը դեկրետ է ընդունում Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրավունքի վերաբերյալ։

Սակայն Անդրկովկասում սկսվում է հակահեղափոխական, հակասովետական կառույց, որի մեջ մտնում էին հայ, վրացի, ադրբեջանցի կապիտալիստներն ու կալվածատերերը, մենշևիկները, էսսեռները, դաշնակները։ Անդրկովկասում ստեղծվում են կառավարման տարբեր կառույցներ՝ Ժամանակավոր կառավարություն, Անդրկովկասյան հատուկ կոմիտե, Ազգային խորհուրդներ,

Անդրկովկասյան Սեյմը և Անդրկովկասյան Կոմիսարիատը, որոնք ցանկանում էին Անդրկովկասը կտրել Ռուսաստանից: Անդրկովկասի անկախության հռչակումից հետո 1918թ. մայիսի 28-ին հռչակվում է Հայաստանի անկախությունը: Այն ձեռք է բերվում և պաշտպանվում արյան գնով: Անկախ պետականության հիմնական գրավականը դառնում է Մայիսյան հերոսամարտերը:

Այստեղ մի պահ կանգ ենք առնում և ուշադրություն դարձնում **քարտեզներին**: Առաջին քարտեզում (Հավելված 1) պատկերված է ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում, երկրորդում՝ (Հավելված 2) 1918թ. Մայիսյան հերոսամարտերը:

Առհասարակ դպրոցականների պատմական կրթության, տարածապատկերային մտածողության, պատկերացումների առաջացման և զարգացման խնդրում շատ մեծ դեր ունեն քարտեզները: Պատմական և քարտեզագիտական գիտելիքները գտնվում են ամուր փոխհարաբերությունների մեջ: Քարտեզի կիրառումը նպաստում է սովորողների մոտ ճանաչողական հմտությունների, ինքնուրույն և պատկերային մտածողության զարգացմանը :

<u>Հոգևորականության մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին:</u>

Չնայած այս շրջանի այն բոլոր խոչընդոտներին ու արգելքներին, որոնք ժամանակ առ ժամանակ ստեղծվում էին Հայ եկեղեցու համար Ռուսական կայսրության առանձին պետական կառույցների և պաշտոնյաների կողմից, այնուամենայինիվ Հայ եկեղեցին մնում էր կայուն և ազդեցիկ: Նա ուներ հարուստ ծխական համայնքներ, մեծաքանակ եկեղեցիներ, վանքեր և ստվարաթիվ հավատացյալ ժողովուրդ: Իսկ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի այդ ծանր օրերին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը, Ամենայն Հայոց կաթողիկոսն ու միաբանությունը, հավատարիմ մնալով հայ եկեղեցու հայրենասիրական դարավոր ոգուն, միասնական ու աննահանջ դուրս եկան համընդհանուր թշնամու դեմ՝ հանուն հայրենյաց և ազգի հարատևման:

Գրավելով Ալեքսանդրապոլը թուրքերը առաջանում են Երևան: Գևորգ Ե կաթողիկոսին առաջարկվում է իր իսկ անվտանգության համար մեկնել Սևանա լճի կղզում գտնվող Սևանա վանքը: Կաթողիկոսը պատասխանում է. <<Եթե հայկական ուժերն ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, ապա ես ինքս կանեմ դա, հոգ չէ, թե կզոհվեմ հազարամյա Մայր Տաճարի շեմին>>: Ավելին, նույն վճռականությամբ նա կոչով դիմում է ժողովրդին: Կաթողիկոսի նման կեցվածքն էլ նպաստում է հայ ժողովրդի պայքարի մղմանը և քղքական բոլոր կողմորոշումներից հրաժարվելով՝ բոլորը ձեռնամուխ են լինում երկրի պաշտպանությանը:

Այսօր խիստ կարևորվում է պատմության դասավանդման որակի և արդյունավետության հետագա բարձրացումը: Այդ գործում գերակա նշանակություն են ստանում դասավանդման և ուսուցման արդի մեդիա տեխնոլոգիաները: Այս տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպվող և իրացվող դասատեսակը կոչվում է մեդիադաս կամ մեդիա կրթական պարապմունք: Դասագործընթացի այս ձևն ավելի դյուրին է դարձնում պատմության ուսուցման գործընթացում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը և համակարգված գիտելիքների ընկալումը:

Այսպես. պատմության մեդիա դասի գործընթացում հնարավոր է լսել անվանի պատմաբանների մեդիա դասախոսությունները սովորողներին ուղղելով նրանց դասախոսության թեմային վերաբերող առանցքային հարցեր, իրականացնել առցանց ֆորում-քննարկումներ Googl Meet և Zoom համակարգչային տեսաձրագրերի միջոցով, պատմություն ուսումնասիրող այլ լսարանների հետ համադրական և համեմատական վերլուծության ենթարկել պատմական հասկացությունները, որոնք անհրաժեշտ են փաստերի բացատրության և դասակարգման համար: Քանի որ պատմություն առարկայի պետական չափորոշիչով և ծրագրով մեծ տեղ է հատկացվում հասկացությունների հետ տարվող աշխատանքներին, մեդիա դասի տարբեր փուլերում առցանց ֆորում-քննարկումներից կատարած եզրահանգումների հիման վրա կարելի է էլեկտրոնային գծագրական մեդիա դասակարգիչների օգնությամբ, որոնք ավելի տեսանելի են դարձնում հասկացությունները և դրանց միջև գոյություն ունեցող կապերը, ակտիվ /smart/ գրատախտակին գծել հասկացությունների աղյուսակ, որում սովորողներից յուրաքանչյուրը կգրի հասկացություններին բնորոշ հատկանիշները՝ առանց տալու նրանց սահմանումները[2]:

Օրինակ՝

Անդրկովկասը 20-րդ դարի սկիզբին	
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ	ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇ
Ռուսական հեղաշրջում	Ռուսաստանում կատարվող իշխանափոխություն, որի արդյունքում տապալվում է մենիշխանությունը
Անդրկովկասյան հատուկ կոմիտե	Ժամանակավոր կառավարության տեղական գործադիր իշխանության մարմին
Թուրքահայաստան	Օսմանյան կայսրություն նվաճված

[2] Եփրիկյան Ա., Պատմության դասավանդման արդի մոթոդներ և տեխնոլոգիաներ, Երևան, 2021, էջ 282:

	հայկական տարածները (Արևմտյան Հայաստան)
Մայիսյան հերոսամարտեր	Հայկական մարտեր թուրքական բանակի դեմ՝ սեփական հայրենիքում ապրելու և նոր գենոցիդի չենթարկվելու համար
Անկախություն	քաղաքական ինքնուրույնություն, ինքնիշխանություն, ազգի, ժողովրդի, պետության կամ երկրի ենթակայության կամ կախվածության բացակայություն

Հարց սովորողներին

1.Պարզաբանեք ինչպիսի՞ պայմաններում սկսվեցին Մայիսյան հերոսամարտերը։

2.Վերլուծեք և գնահատեք Գևորգ Ե Սուրենյանցի գործունեությունը։

Սրանք բաց տեսակի հարցեր են, որոնք չեն ենթադրում միանշանակ պատասխան և հնարավորություն են տալիս պատասխանի մեջ լինել ազատ։

Հարցադրումներից հետո շարունակում ենք դասախոսությունը և սովորողներին ներկայացնում հայ ազգային հրամանատարական գործիչների և հոգևորականների գործունեությունը Մայիսյան հերոսամարտերին։ Այդ նպատակի համար կիրառել ենք **Կերպարային քարտը**, որը հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար։ Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության, ժամանակահատվածի կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները։ Կերպարային քարտը կարելի է կիրառել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցադրումների քննարկման համար։

Աշակերտներին նախօրոք տրամադրել ենք հայ ազգային և հոգևոր գործիչների ցանկը։ Այն կարելի է կազմել նաև սովորողների հետ միասին, քանի որ այդպես նրանք կներգրավվեն ուսուցման գործընթացին։ Չենք սահմանափակվել միայն հիմնական հայտի կերպարներով. որքան բազմազան լինեն կերպարները, այնքան ավելի լիարժեք կլինեն իրադարձության համատեքստը և դրա ուսումնասիրությունը։ Յուրաքանչյուր կերպարի վերաբերյալ քարտում ներառել ենք այնպիսի նախնական տեղեկատվություն և վերլուծական հարցեր, որոնք ուրվագծում են նրա մտադրությունները, հուզական վիճակը, շահերը։ Օրինակ՝ ի՞նչ իրադարձություններ են նախորդել Մայիսյան հերոսամարտերին, ինչպիսի՞ իրավիճակ էր Արևելյան և Արևմտյան Հայաստանում, ինչպես կարող էր այդ իրավիճակն ազդել Հայոց եկեղեցու վրա, ինչպե՞ս էին ապրում մարդիկ

տվյալ ժամանակամիջոցին: Աշակերտներին տրամադրել ենք նաև լրացուցիչ աղբյուրներ՝ տանը նախապատրաստվելու համար: Կերպարային քարտերը վիճակահանությամբ բաժանել ենք սովորողներին և տվել վերլուծելու ժամանակ: Կարևոր է, որ սովորողներն իրենց ազատ զգան վերլուծության ժամանակ, փաստային տվյալները հավելեն իրենց անհատական մեկնաբանությամբ ու վերաբերմունքով: Ստորև կերպարային քարտերի մի քանի օրինակ:

Սարտարապատի ճակատամարտը	
 Դուք հայ նշանավոր ռազմական գործիչ, Սարդարապատի ճակատամարտի գլխավոր հրամանատար, ազգային հերոս Դանիել Բեկ-Փիրումյանն եք: Մինչև ճակատամարտի սկսվելը տարբեր քաղաքական և ռազմական գործիչների հետ գաղտնի քննարկում եք ճակատամարտի նպատակահարմարությունն ու բանակի իրավիճակը: Ի՞նչ եք զգում, ինչպե՞ս կփաստեք ճակատամարտ սկսելու անհրաժեշտությունը,	 **Դուք Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցն եք:** Ձեզ տեղեկացնում են, որ վիճակը չափազան վտանգավոր է, էջմիածին մնալը անապահով է և պետք է հեռանաք Սևան Ձեր ապահովության համար: Գիտեք , որ ամբողջ հայ ժողովուրդի ու գաղթականության վիճակը օրհասկան է, նրանց կյանքը վտանգված է: Նկարագրեք, թե ի՞նչ եք զգում, որն է խնդրի լուծման լավագույն տարբերակը և ինչպիսի քայլեր կձեռնարկեք այդ ուղղությամբ:
 Դուք հայոց ազգային խորհրդի նախագահ, Երևանի դիկտատոր Արամ Մանուկյանն եք: Ձեզ տեղեկացնում են Բաթումի հաշտության պայմանագրի մասին, որով Հայաստանին մնում էր 12 հազ. քառ մ տարածք: Դուք որպես դիկտատոր Ձեր վճռական խոսքը պետք է ասեք Ազգային խորհրդի նիստում՝ որպես դիկտատոր: Ի՞նչ եք զգում, ի՞նչ եք որոշում, ինչպե՞ս եք հիմնավորում ձեր որոշումը:	 **Դուք ռուսական և հայկական բանակների ռազմական գործիչ, հայկական զորքերի ընդհանուր հրամանատար Մովսես Սիլիկյանն եք:** Ձեր առաջարկը էջմիածինը լքելու վերաբերյալ մերժվում է հայոց կաթողիկոսի կողմից: Դուք որոշում եք վերջնականապես դադարեցնել հայկական զորքերի նահանջը և հակառակորդի հետ տալ ճակատամարտ: Ներկայացրեք Ձեր գործողությունները:

Դասախոսության ընթացքում արդյունավետ է կիրառել նաև **զրույցի մեթոդը,** որը բովանդակային պատումի տեսակ է: Բ.Ն. Վերնանդսկին սահմանում է զրույցի նշանակությունը

որպես մեթոդ, որը հնարավորություն է տալիս ստուգելու աշակերտների պատմական գիտելիքների ճշգրտությունը և ամբողջականությունը, դուրս է բերում ուսուցչի նկատմամբ պահանջները[3]: Ի.Վ.Գիտիսն ընդլայնում է զրույցի օգտագործման հնարավորությունները՝ սա կարճ ներածական զրույց է, կրկնող բնույթի զրույց է, ընդհանրցված զրույց է, <<պատմական քննարկում է>>, զրույց նկարի, դասագրքի տեքսի, պատմական փաստաթղթի կամ քարտեզի վերաբերյալ[4]:

Զրույցին ուսուցիչը անցնում է ուսումնական բարդ հիմնախնդիրների ժամանակ, սովորողների ճանաչողական գործունեությունը ակտիվացնելու նպատակով: Նման զրույցի ընթացքում ուսուցիչը սովորողներին առաջարկում է հարցեր, որոնք ենթակա են ուսումնասիրման, դրդում են նրանց մտածել, գտնել անհայտը և ձեռք բերել համապատասխան գիտելիքներ: Էվրիստիկական զրույցի ընթացքում ուսուցիչը հաջողության է հասնում այն ժամանակ, երբ գիտելիքների ընկալման և յուրացման գործընթացը կազմակերպում է փուլերով: Զրույցի մեթոդը իր հերթին բաժանվում է մի քանի տարատեսակների. ներածական զրույցի նպատակն է սովորողներին պարզ ձևով հասցնել նոր նյութը, այն նպատակաուղղված է անցած դասերի կամ դասընթացների, բաժինների ուսումնասիրման ժամանակ ձեռքբերած գիտելիքների արդիականացմանը, համակարգմանն ու ընդհանրացմանը: Վերլուծական և ընդհանրացնող զրույցը նպաստում է ուսուցչի կողմից ներկայացված նյութի ընկալմանը, իմաստավորմանն ու սովորողների գիտելիքների ընդլայնմանը: Ավարտական զրույցը կազմակերպվում է ուսումնասիրված դասերի արդյունքների ամփոփման նպատակով: Ավարտական զրույցը կիրառվում է նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է ընդհանրացնել տարբեր փաստեր, ցույց տալ երևույթների և գործընթացների զարգացման օրինաչափ ընթացքը: Զրույցի մեթոդի տարատեսակներից է իրավիճակի լարվածության ստեղծումը, որը բաղկացած է մի քանի փուլերից. ա) լարվածության ստեղծում, բ) լարվածության սրում, գ) հանգույցի լուծում: Այստեղ պատումը տարվում է խոսակցության ձևով, որի ընթացքում բացահայտվում է սոցիալ-քաղաքական երևույթների էությունը՝ փորձելով լուծել հակասական իրավիճակները: Երկխոսությունների ընթացքում բացահայտվում են սոցիալական երևույթների էությունը: Այստեղ սովորողները կարող են դառնալ երկխոսությունների մասնակիցներ հարցերի, պատասխանների և քննարկումների

[3] Вернадский В.Н. Указание по преподаванию истории в начальной школе. Тетюши, 1935, ст. 6.
[4] И. В. Гиттис, Начальное обучение истории. Очерки по методике преподавания истории, Ленинград, 1940, ст. 92-93.

միջոցով[5]: Ի տարբերություն բովանդակային պատումի՝ կերպարային պատումը պարունակում է ավելի շատ տեսական նյութեր և պատմական գլխավոր փաստերը ներկայացնում է ավելի հանգիստ վիճակում: Զրույցի մեթոդը կիրառելով մեր կողմից ներկայացվող թեմայի շրջանակներում՝ հարց ենք ուղղում դասարանին. «Ի՞նչ եզրակացություն կարող ենք անել հայ քաղաքական, հոգևոր գործիչների գործողություններից և ի՞նչ տվեցին մեզ Մայիսյան հերոսամարտերը»: Ծավալվում է ակտիվ հաղորդակցություն, սովորողները լսում են իրենց դասընկերների պատասխանները և հայտնում սեփական կարծիքը: Որից հետո շարունակում ենք ներկայացնել, որ Մայիսյան գոյապայքարում հայկական բանակի հաղթանակը ազգային քաղաքական-ռազմական-հոգևոր ղեկավարության ցուցաբերած վճռականության, անձնական խիզախության, բանակի հրամատարության ցուցաբերած ռազմական-օպերատիվ փայլուն արվեստի և հաղթանակի հանդեպ ունեցած հավատի արդյունքն էր: Հաղթանակը դարձավ իրականություն ժողովուրդ-բանակ-ղեկավարություն բացառիկ միասնության շնորհիվ:

Հանձնարարված թեմայի վերաբերյալ արտահայտված կարծիքների և միմյանցից ստացված տեղեկությունների ընդհանրացման արդյունքներն ու եզրակացությունները կարող ենք ներկայաց-նել էլեկտրոնային գծագրական մեդիա դասակարգիչների միջոցով գծագրված ընդհանրացնող աղյուսակով[6]:

Օրինակ՝

Մայիսյան հերոսամարտերը և հայոց եկեղեցին			
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՄՔԵՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ	ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
	1879-1919 թթ.	Հայ ժողովրդին ու զորքին հաղթանակի առաջնորդողը:	Նրա շնորհիվ հնարավոր է լինում վերհսկելի դարձնել գաղթը:
ԴԱՆԻԵԼ ԲԵԿ-ՓԻՐՈՒՄՅԱՆ	1861-1921 թթ.	Բացառիկ է եղել նրա դերակատարումը Սարդարապատի ճակատամարտի հաղթանակում, որտեղ նա փաստացի հանդիսացել է	Հենց նրա ջանքերով հնարավոր եղավ կազմակերպել Սարդարապատի ռազմաճակատի գիծը և արժանի հակահարված

[5] Պապոյան Հ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013, էջ 60:
[6] Եփրիկյան Ա., նշվ. աշխ. , էջ 283:

		այդ ուղղության հայկական զորաջոկատների ընդհանուր հրամանատարը	տալ թուրք զավթիչներին: Իր գլխավորած ուժերով ռազմաճակատի կենտրոնական մասում ջախջախել ու հետ է շպրտել թուրք զավթիչներին:
ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑ	1911-1930 թթ.	Սարդարապատի ճակատամարտի բախտորոշ օրերին, չնայած զինվորական ղեկավարության պահանջին, նա չի տեղափոխվել ապահով վայր, իսկ Մայր Աթոռի միաբաններն իրենց անմիջական մասնակցությամբ հայ մարտիկներին քաջալերել են ռազմաճակատի առաջին գծում	1918 թվականի մայիսին զգալի դեր է խաղացել թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսամարտերի կազմակերպման գործում:
ԴՐՈ (ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ)	1883-1956 թթ.	1918 թվականի մայիսի 23-27-ին Դրոն ստանձնեց Ապարանի ճակատամարտի հրամանատարությունը	Ապարանի ճակատամարտը, նրա փառքի գագաթնակետն էր: Հայ ժողովրդի համար ամենաօրհասական այդ օրերին նա կարողացավ ոչ միայն կասեցնել թուրքական 13.000-ոց զորաբանակի առաջխաղացումը դեպի Երևան, այլև ջախջախիչ հարված հասցրեց թուրքերին, որոնք խուճապահար փախան մարտադաշտից:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ	1886-1955	Ղարքիլիսայում Դրոյի ելույթը բեկում է մտցնում և հեղաշրջող ազդեցություն ունենում զորքի, բնակչության վրա:	Նրա գլխավորությամբ իրականցվող Ղարաքիլիսայի եռօրյա հերոսամարտով՝ հայությունը հաստատել է իր հարատևելու կամքը:

<u>Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը</u>:

Այս հարցի ներկայացումը սկսվում ենք **մտագրոհ մեթոդով**: Մտքերի տարափ կամ մտագրոհ /brainstorming/, խմբային (թիմային) աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է,

քանի որ հաճախ խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Դասագործընթացի խթանման փուլում «Մտքերի տարափ կամ մտագրոհ» մեթոդի կիրառման ժամանակ խմբի անդամների առջև խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետը՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա: Պատկերավոր գնահատելու համար երբեմն ասվում է, որ մտագրոհի մեթոդը կիրառելիս բոլոր մտքերն ու գաղափարներն ընդունելի են, սխալ չկա: Մասնավորապես պատմության դասագործընթացում այս մեթոդը կիրառելիս, պետք է ելնի առարկայի առանձնահատկություններից և սահմանի որոշակի կանոններ:

Այս մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, պատմական որոշակի իրադարձությունների, փաստերի, երևույթների, ժամանակաշրջանի մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ բազմատեսանկյուն սկզբունքով, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են արդյունքները: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և դասավանդողի դերերում: Այստեղից հետևում է, որ սույն մեթոդի իրացմամբ դասավանդողը, փուլ առ փուլ իրականացնում է հստակ նպատակներ: Դրանք են՝

- Անդրադառնալով պատմական թեմային առնչվող տարբեր ոլորտներին, այդ թեմայի բազմատեսանկյուն ուսումնասիրումը:
- Ընտրված թեմայի վերաբերյալ տարբեր սկզբնաղբյուրների վերլուծության, համադրման և համեմատության իրականացումը:
- Մանկավարժական աջակցության ցուցաբերումը, նպաստելով սովորողների միմիանց հետ հաղորդակցմանը, առաջադիր հարցերի պատասխանների համատեղ որոնմանը:
- Սովորողների փորձագիտական կարողությունների մշակումը:

Այսպես. մտագրոհ մեթոդը կիրառում ենք ամբողջ դասարանի մասնակցությամբ, գրառումները կատարվում են մեկ սովորողի միջոցով գրատախտակին:



Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո բնաջնջման սպառնալիքը կախվում է արևելահայության գլխին: Ռուս-թուրքական պատերազմը վերաճում է հայ-թուրքական պատերազմի և այսուհետ բացառապես հայ ժողովրդից էր կախված պատերազմի վախճանը: Առաջ շարժվող թուրքական զորքին միանում են մահմեդականների և քրդերի հրոսակները, որոնք սպանում և թալանում են բազում հայկական գյուղեր: Ինչպես Արևմտյանում, Արևելյանում ևս հայերը պետք է ենթարկվեին զանգվածային ֆիզիկական բնաջնջման, որը պետք է կատարվեր թուրքերի առաջխաղացմանը զուգընթաց: Այդ ամենը առավել ակնառու երևում է 1918թ. մայիսի 11-ից հունիսի 4-ը Բաթումում կայացած կոնֆերանսում: Թաթարներին և վրացիներին բոլորովին չէր մտահոգում Հայկական հարցը, և դրա պաշտպանությունը որևէ կարևորություն չուներ նրանց շահերի տեսանկյունից: Վրացական կողմը ամեն կերպ փորձում էր Բաթումը պահել իր ձեռքում, որի փոխարեն թուրքերին հանձնել Կարսը: Հայկական պատվիրակությունը թեև առաջ քաշեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը, բայց այն որակվեց միջամտություն Թուրքիայի ներքին գործերին:

Այսպիսով, թուրքական բանակի դեմ մեն մենակ է մնում հայկական փոքրաթիվ զորքերը, որոնք կամ պետք է պայքարեին իրենց գոյության և հայրենիքի պաշտպանության համար:

Հայոց պատմության այս բախտորոշ պահին հայ հոգևոր, քաղաքական և ռազմական ղեկավարությունը հանդես է բերում մինչ այդ երբևէ չտեսնված անսասան կամք, վճռականություն և միասնականություն: Ամենայն հայո կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը հրաժարվում է թողնել Սուրբ Էջմիածինը, գեներալ Մ. Սիլիկյանը և Դրոն որոշում են այլևս չնահանջել և տալ վճռական ճակատամարտ: Նրանց դիրքորոշումը մեծապես նպաստում է զորի և ժողովրդի հոգեբանության վրա: Ստեղծվում է պաշտպանական բնագիծ, ստեղծվում են կամավորական գնդեր, աշխարհազորներ, որոնց շարերը համալրվում են նաև նվիրյալ հոգևորականներով: Մ. Սիլիկյանը ժողովրդին կոչում է դուրս գալու պատերազմի հանուն ֆիզիկական գոյության, հանուն ոտնակոխ եղած ճշմարտության: Այսպիսով, կազմավորված հայկական զորամասերն ու աշխարահազորայինները դիմակայում են քանակապես գերազնացող թուրական կանոնավոր բանակին՝ մեկ անգամ ևս հաստատելով այն փաստը, որ կազմավորված և հերոսական պայքարի արդյունքում հնարավոր է հասնել հաղթանակի:

1918 թ. կեսերին Անդրկովկասում տեղի ունեցող ռազմական և քաղաքական դեպքերը ցույց են տալիս, որ այն գնում է քայքայման: Մայիսի 26-ին լուծարվում է Անդրկովկասյան Սեյմը, և նույն օրը իր անկախությունն է հռչակում Վրաստանը: Մայիսի 27-ին հիմնադրվում և անկախ է հռչակվում Ադրբեջանը (իրանական Ատրպատականի անունից): Ստեղծված պայմաններում հայությանը այլ ելք չէր մնում. Հայաստանի անկախության հռչակումը դառնում է պատմական անհրաժեշտություն: 1918 թ մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը լիազորում է Ալ. Խատիսյանի գլխավորած պատվիրակությանը անկախ Հայաստանի անունից մեկնել Բաթում Տրապիզոնում ընդհատված բանակցությունները շարունակելու և թուրքերի հետ հաշտության պայմանագիր կնքելու համար: Երկու օր անց լինում է Հայոց ազգային խորհրդի պաշտոնական ձևակերպումը Հայաստանը անկախ հռչակելու վերաբերյալ:

Սովորողների կողմից յուրացվող գիտելիքները խորացնելու և որոշակիացնելու համար շատ կարևոր է պատմական փաստաթղթերի կիրառումը: Դրանց հետ աշխատանքը ակտիվացնում է սովորողների մտածողությունն ու պատկերացումները, նպաստում պատմական գիտակցության և տրամաբանության զարգացմանը: Ձևավորում ինքնուրույն աշխատանքի հմտություններ՝

դատողություն, կարդալ, փաստաթղթերը, վերլուծել տեղեկատվությունները։ Ուստի այստեղ ցուցադրում և պարզաբանում ենք Հայաստանի անկախության հռչակագիրը.

«Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով ն Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն։ Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»:

Հռչակագրի հեղինակը Նիկոլ Աղբալյանն էր։

Սովորողներին բացատրվում է, որ մի շարք քաղաքական հանգամանքներից ելնելով հռչակագրում չի հիշատակվում անկախություն բառը, բայց դիվանագիտական մոտեցմամբ ձևակերպված միտքը, որ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում էր հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը, դա ինքնըստինքյան նշանակում էր անկախության հռչակում։ Եվ հայկական գավառներ ասելով հասկացվում են Անդրկովկասի նահանգներում գտնվող հայաբնակ բոլոր գավառները։ Եվ քանի, որ Հայոց ազգային խորհուրդը հայկական պատվիրակությանը անկախ Հայաստանի անունից լիազորել էր բանակցություններ վարել և կնքել հաշտություն Թուրքիայի հետ, այդ իսկ պաճառով «Մայիսի 28-ը» պատմության մեջ մտավ որպես Հայաստանի անկախության օր։ Դասախոսության վերջում կատարեցինք թեմայի ամփոփում, սովորողները կատարեցին եզրակացությունները։ Որպես տնային առաջադրանք սովորողները պետք է պաստառ կազմեին՝ Մայիսյան հերոսամարտերի վերաբերյալ:

Այսպիսով՝ արդյունավետ դասը կարող է հիմնված լինել միայն փոխկապակցվածության, փոխհամագործակցության, դասի բովանդակության և նրա մեթոդիկայի փոխադարձ ամրության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մայիսյան հերոսամարտերը, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր հայրենիքի վերջին անկյունը՝ Արևելյան Հայաստանը, հիմք հանդիսացան Հայաստանի անկախության հռչակման համար: Այս հերոսամարտերը ունեցան բախտորոշ նշանակություն Հայաստանի և հայ ժողովրդի գոյության համար, քանի որ եթե չլինեին այդ պատմական հաղթանակները, Արևելյան Հայաստանը և արևելահայությունը կարժանանար այն դաժան ճակատագրին, որին արժանացան Արևմտյան Հայաստանը և արևմտահայությունը:

Անդրադառնալով թեմայի հիմնախնդրին՝ մայիսյան հերոսամարտերին հոգևորականության մասնակցությանը, գալիս ենք հետևյալ եզրահանգման.

Պատմության մեջ պետականության 600-ամյա բացակայության պայմաններում եկեղեցին, իր վրա վերցնելով պետության գործառույթները, գործուն մասնակցություն է ունեցել հայրենիքի պաշտպանության մեջ՝ մշակելով ազգի բարոյական առողջացման, հայրենասիրության դաստիարակության որոշակի համակարգ:

Այդ օրերին, երբ ժողովրդի լինել-չլինելու հարցն էր դրված, մեր ժողովրդի բոլոր խավերը՝ այդ թվում նաև պետական-քաղաքական այրերն ու եկեղեցու սպասավորները, միակամ որոշեցին ամեն գնով պաշտպանելու հայրենի երկիրը:

Այս բախտորոշ պահին իր աննահանջ կամքն է դրսևորում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը, ով սառը անտարբերությամբ մերժելով Էջմիածինը լքելու առաջակը՝ կոչով դիմում է հայ ժողովրդին՝ արթնացնելով աննահանջ պայքարելու կամք: Երբ թուրքական վտանգը սպառնում էր Էջմիածնին ու Երևանին, Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիսացավ այն եզակի գործիչներից մեկը, ով ցուցաբերեց չհանձնվելու անհողդողդ կեցվածք: Կարող ենք ասել, որ կաթողիկոսի այս դիրքորոշումը դարձավ ինքնապաշպանական մարտերի կազմակերպման գլխավոր պատճառներից մեկը: Հայ ժողովրդին մարտի կոչելու ահազանգը դարձավ Մայր Աթոռի զանգակատնից հնչող զանգերի ձայնը, որը սթափեցնում և արթնացնում է հայ ժողովրդին մահաբեր քնից:

Էջմիածնի միաբանությունը կաթողիկոսի ղեկավարությամբ նախաձեռնում է հայկական զորքերին խանդավառելու, մարտական ոգին բարձրացնելու առաքելությունը և ժողովրդին կոչում ինքնապաշտպանական կռվի: Տեղի ունեցած մայիսյան բոլոր հերոսամարտերի ժամանակ հայ

զինվորի կողքին զենքը ձեռքին կանգնում է հայ հոգևորականությունը՝ հավատարիմ մնալով հայ եկեղեցու հայրենասիրական դարավոր ոգուն: Հայ հոգևորականությունը միասնական ու աննահանջ դուրս է գալիս թշնամու դեմ՝ հանուն հայրենյանց և ազգի հարատևման: Մայիսյան հերոսամարտերին իրենց մասնակցություն են ցուցաբերել Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Զավեն եպիսկոպոս Բաբայանը, Եզնիկ վարդապետ Ներկարարյանը, Մովսես եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը և ուրիշներ:

Պատմական ուսումասիրությունը թույլ է տալիս մեզ ընդգծելու և արժևորելու եկեղեցի-պետություն համագործակցության անհրաժեշտությունը, որը հիմնքարն է անկախ, զարգացած և հզոր պետության: Քանի որ պատմությունը կրկնվելու սովորություն ունի, ուստի պետք է հետևություն կատարել այս օրերում տեղի ունեցած իրադարձություններից, անցյալի սխալներից դասեր քաղել և նոր սերնդին կոչել հայրենասիրության, միասնականության և համերաշխության: Հաշվի առնելով ներկայում տեղի ունեցող իրադարձությունները՝ անհրաժեշտ ենք համարում օրինակ բերել այս օրերին հայերի կողմից իրականացրած սխրանքները և գալիք սերնդի մեջ արմատավորել այն գաղափարը, որ պետությունը հաղթում է **ժողովուրդ-բանակ-հոգևորականություն-ղեկավարություն** բացառիկ միասնության շնորհիվ:

Հետազոտական աշխատանքի շրջանակում ուսումասիրելելով թեմայի դասավանդման առաձնահատկությունը՝ եկել ենք այն եզրահանգման, որ արդի մեթոդները, պատմության դասավանդման նորանոր տեխնոլոգիաները, ուսուցման գործընթացի կազմակերպումը հնարավորություն են ընձեռում խթանել սովորողների մոտ գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, բարձրացնել հետաքրքրությունը պատմության նկատմամբ, ձևավորել նրանց աշխարհայացքը և զարգացնել ընդունակությունները:

Ընգծելով թեմայի ուսումնադաստիարակչական նշանակությունը՝ առանձնացված մեթոդների շնորհիվ հնարավոր կլինի առավել պարզ ու մատչելի ներկայացնել հիմնահարցը՝ սովորողների մոտ ձևավորելով ազգային ինքնագիտակցություն, ծանոթացնել պատմական անցյալի հետ, անցյալի փորձի հիման վրա կառուցել ներկայիս ճիշտ ուղին, ճիշտ գնահատել ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները, կարևորել ժողովրդի միասնականությունը, եկեղեցու դերակատարումը երկրի պահպանման և զարգացման գործում և, վերջապես, դաստիարակել այնպիսի զարգացած անհատ, որը օժտված կլինի հայրենասիրությամբ և համամարդկային արժեքներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Վ., Զինվորյալ հոգևորականներ, Մաս Ա, Երևան, 2017:
2. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973:
3. Եփրիկյան Ա., Պատմության դասավանդման արդի մեթոդներ և տեխնոլոգիաներ, Երևան, 2021:
4. Խատիսյան Ա., ՀՀ ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1568:
5. Հայոց պատմություն, 8-րդ դասարան, Մելքոնյան Ա., Սիմոնյան Ա., Նազարյան Ա., Մուրադյան Հ., Երևան, 2018, էջ 146-152:
6. Պապոյան Հ., պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013:

ՌՈՒՍԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7. И.В. Гиттис, Начальное обучение, Очерки по методике преподавания истории, Ленинград, 1940:
8. Вернадских В.Н. Указание по преподаванию истории в начальнох школе, Тетюши, 1935: